№ 121 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 7 1901 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 7 № 121

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ջրի պահպանութեան մասին հոգատարութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առաջին քառամեակ. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սուրմալուի տնտեսական կեանքից։

ՋՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ

—

Պետական մի նոր կարգադրութիւն առանձին կարեւորութիւն ունի մեր երկրի համար։ Այդ կարգադրութիւնը նպատակ ունի հոգալ աղբիւրների և լեռնային լճակների ջրառատութեան մասին։ Մեր երկիրը ջրի մեծ կարօտութիւն ունի և միայն ջրի կանոնաւոր և առատ պաշարներով կարող է զարգացնել իր գիւղական տնտեսութիւնը կատարեալ կերպով։ Մինչդեռ իրականութեան մէջ մենք տեսնում ենք, որ ջրերը ոչ միայն չեն աւելանում մեր երկրում, այլ շատ տեղերում նոյն իսկ զգալի կերպով պակասել են։

Ջրի պակասելու գլխաւոր պատճառներից մէկն էլ անտառների անխնայ կոտորելն է։ Մանաւանդ վտանգաւոր է այն անտառների ոչնչացումը, որտեղից սկիզբն են առնում ջրի վտակները։ Այդ անտառները յաճախ բուսնում են այնպիսի տեղերում, ուր անտառային բուսականութիւնը դժուարութեամբ է արմատ բռնում և երբ մի անգամ ոչնչացվում է, նա դժուարութեամբ է վերանորոգվում։ Արգարև ժայռերի մէջ, քարափների գլխին երկար տարիների ընթացքում բուսած անտառը, վայր գլորվելուց յետոյ, պահանջում է երկար ժամանակ, որպէս զի նորից վերականգնվի։

Անտառային նոր օրէնքը, աչքի առաջ ունենալով անտառների այդ նշանակութիւնը, առանձին ուշք է դարձնում «ջրամբար» անտառների պահպանութեան վրա և պարտաւորեցնում է պետական կալուածների վարչութեան ղեկավարներին այդպիսի անտառների բարեկարգութեան և պահպանութեան ծախքերը կատարել արքունական հաշւով և մինչև անգամ վերադարձնել անտառի տէրերին այն ծախքերը, որ նրանք արել են իրանց միջոցներից այդ անտառների վրա։

Օրէնքը թոյլ է տալիս անտառային հողերի շրջանից դուրս հանել այն կտորները, որոնք հարկաւոր են կալուածքի կամ գիւղի տնտեսութեան համար, օրինակ դաստակերտներ շինելու, խոտահարքներ կազմելու և ուրիշ պիտոյքներ ապահովելու համար։

Մեր գիւղատնտեսները պէտք է ոչ միայն համակրութեամբ նայեն օրէնքի այդ նոր բարեփոխութեան վրա, այլ և իրանց կողմից նպաստեն պետութեանը՝ իրագործելու իր բարի նպատակները։ Մեր երկրին ջուր է հարկաւոր և մեզնից իւրաքանչիւրը պէտք է նպաստէ այդ կարիքին բաւարարութիւն տալու գործին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌԱՄԵԱԿ

—

Այս տարի լրանում է Ալեքսանդրոպօլի քաղաքային ինքնավարութեան առաջին քառամեակը։ Արդէն ձայնաւորներ ընտրվեցին երկրորդ քառամեակի համար։ Այս առիթով ես կը ցանկայի ընթերցողներին ծանօթացնել Ալեքսանդրոպօլի քաղաքային վարչութեան չորս տարվայ գործունէութեան հետ։

Սկզբնական դրութիւնը։ Քաղաքային ինքնավարութիւնը հաստատված օրից քաղաքի դրութիւնը մօտաւորապէս այս պատկերն էր ներկայացնում։ Բացի Բեհբութեան փողոցից (ճանապարհների հաղորդակցութեան վարչութեան հոգացողութեան ներքոյ էր)—ոչ մի փողոց կամ հրապարակ շինված չէր. ամբողջ քաղաքը լուսաւորվում էր 252 լապտերներով. բաւական լաւ խնամվում էր քաղաքային այգին. նոր բացված էր բուժարանը. քաղաքը 2000 րուբլի էր տալիս իգական պրոգիմնազիային, 200 րուբլի քաղաքային ուսումնարանին և 70 րուբլի տալիս էր վերոյիշեալ պրոգիմնազիայում մի որդեգրուհի պահելու համար. այդ 2270 րուբլին առացվում էր քաղաքացիներից։ Քաղաքի նախահաշիւը 1897 թւին էր. եկամուտ 47609 րուբլի 18 կոպ., ծախս՝ 55386 րուբլ. 67 կոպ.։

Քաղաքային ինքնավարութեան սկզբնական գործունէութիւնը։ 1) Կազմված է քաղաքին պատկանած գոյքերի ցուցակը և մի և նոյն ժամանակ չափված են նորից զանազան հողերի կտորներ. այդ չափումից երևացել է՝ որ ոստիկանութեան օրով 464 քառ. սաժէն տարածութիւն ունեցող հողը՝ իսկապէս 564 քառ. սաժէն է.—այսինքն 100 քառ. սաժէն պակաս է չափված, և որից քաղաքը չէ օգտվել։ 2) Եկամուտների նոր աղբիւրներ են գտնված։ 3) Բեռնակրութիւնը կանոնաւորված է և այդ գործի համար կանոններ են հրատարակված։ 4) Քաղաքացիների կալուածքները նոր գնահատութեան են ենթարկված և 723 կալուածք՝ (չունեւոր դասակարգի) որ կազմում է բոլոր կալուածքների $1/4$ մասը —ազատված են տուրքից։ 5) Գնահատական տուրքը թեթևացրած է, անշարժ կալուածքների պահպանութեան համար այժմ եկամուտից դուրս են գալիս $15^0/_0$, այն ինչ առաջ նոյն նպատակի համար դուրս էին գալիս $3^0/_0$։ 6) Վերջնականապէս վճռված են մի քանի հարցեր, որոնք չարունակվում էին 70 թւականից և մեծ նշանակութիւն ունէին քաղաքացիների համար. այն է՝ քաղաքի հողերի վրա ինքնագլուխ կերպով շինած տների հարցը (800-ից աւել տներ), բոստանների հարցը և 2202 օրավար արօտատեղիների հարցը։ 7) Դատարաններում գտնված գործերի մեծ մասը վերջացրած են հաշտութեամբ։ 8) Կազմված է քաղաքի յատակագիծը 10 սաժէն (դիւյմը) մասշտաբով. այնպէս որ իւրաքանչիւր կալուածք առանձին կերպով պատկերացրած է՝ իր շինված և չը շինված մասերով։

Քաղաքի բարեկարգութիւն։ 1) Շինութիւններ անողների համար հաստատված են պարտաւորեցուցիչ կարգադրութիւններ։ 2) Քաղաքի կշեռքի համար շինված է սրահ և շուկան (խափանը) սալայատակած է։ 3) Սպիտակ—Ջրի և Գիւմրի-Ջայի աւազանները մաքրված են։ 4) Կամուրջներ են շինված և նորոգված, իսկ այս տարի շինելու են երեք կամուրջ։ 5) Շինված են խճուղիներ փողոցներում և երկաթուղու կայարանը գնալու համար, ընդամենը 3 վերստ 200 սաժէն երկարութեամբ. փողոցների շինելը այժմ էլ շարունակվում է։ 6) Փողոցների լուսաւորութիւնը աւելացրած է՝ 400 լապտեր (առաջ 252 հատ էր) և փորձի համար այս մօտ միջոցներս քաղաքային այգին պէտք է լուսաւորվի «Վաշինգտօն» լապտերներով, որ էլէքտրական լապտերների չափով լոյս է տալիս։ 7) Քաղաքային այգին բարեկարգված է, շուրջը շինված են մայթեր, իսկ այս միջոցներս այգուն միացնելու են հին գերեզմանատան մի մասը, որտեղ բանալու են ճանապարհներ և տնկելու են ծառեր։ (Այդ բարձրութեան վրա ջուր հանելու համար քաղաքը նուէր է ստացել տիկին Ջաւահիր Տէր-Պետրոսեանցից մի ջրհան մեքենայ 500 րուբլի արժողութեամբ)։ 8) Որոշված է բաց անել քաղաքի փողոցները, որոնք շինութիւններով բռնված են. նմանապէս պէտք է բաց անել հրապարակը, որը գտնվում է Բեհբութեան փողոցի և Թիֆլիսի խճուղու մօտ։ 9) Որոշված է փողոցներում ծառեր տնկել, որի համար նախապատրաստական գործողութիւններ են կատարվում։

Առևտուր և արհեստագործութիւն։ 1) Կանոններ են հրատարակված կիրակնօրեայ առևտրի մասին։ 2) Կշիռների և չափերի օրինակներ են բերել տուած։ 3) Որոշված է բաց անել քաղաքային խնայողական դրամարկղ՝ փոքր քանակութեամբ փոխառութիւն և խնայողութիւն անելու համար։ 4) Որոշված է քաղաքային դրամատուն (բանկ) բանալ, որի համար արդէն պատրաստի կայ 13000 րուբլի։ Այս երկու հիմնարկութիւնները կը բացվեն անշուշտ այս տարվայ ընթացքում։ 4) Նոր շուկայ է բացվում Բեհբութեան փողոցի վրա։

Ժողովրդի լուսաւորութիւն։ 1) Քաղաքը իր վրա է առել 2000 րուբլու տարեկան ծախսը՝ օրիորդաց պրոգիմնազիայի համար, որ առաջ քաղաքացիներն էին տալիս։ 2) Որոշված է բանալ քաղաքի հաշւով առևտրական եօթնդասարանեան դպրոց։ 3) Որոշված է բանալ կար ու ձևի օրիորդական դպրոց։ 4) Տրվում է թոշակ պրոգիմնազիայի, նախկին հայոց դպրոցների և քաղաքային ուսումնարանների աշակերտներին տարեկան 270 ր., տրված է միանուագ 450 րուբլի։ 5) Բացված է քաղաքային գրադարան-ընթերցարան։ 6) Ժողովրդի մէջ տարրական գիտութիւններ տարածելու նպատակով բաժանվում են հանրամատչելի գրքոյկներ ձրիապէս (օրինակ, բժ. Արծրունու «Մի խմիր», բժ. Բուդուղեանի «Սիֆիլիս» գրքոյկները)։ 7) Այս տարի օրիորդաց պրոգիմնազիային միանուագ տրվում է 10,000 րուբլի՝ պրոգիմնազիայի շէնքը կառուցանելու համար։

Մաքրութիւն և առողջապահութիւն։ 1) Շինված է նոր, օրինակելի սպանդանոց որտեղ նշանակված է անասնաբոյժ և դեղագործ։ 2) Սպանդանոցի համար կազմված են պարտաւորեցուցիչ կանոններ։ 3) Կազմակերպված են աղբատար սայլեր, որոնց ծախսը, տարեկան 4000 րուբլի, քաղաքի եկամուտնե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Իգդիրից)

—

Ժամանակը կատարում է իր պահանջները։ Հեռու չէ այն անցեալը, երբ գիւղացին խորշում էր գիտնական բժշկութիւնից և իր բոլոր ֆիզիքական ցաւերը յանձնում էր գրբացների և փալչիների ամենակարող զօրութեանը, իսկ այժմ, հնար եղած դէպքում, ամենայն սիրով դիմում է գիտնական բժշկին և ընդունում է կատարելագործված դեղեր։ Բացի այդ՝ ժողովուրդը այժմ սկսում է բոյսերի հիւանդութիւնն էլ բժշկել գիտնական միջոցներով. խաղողի զանազան հիւանդութիւններ մեծ աւերածութիւններ են կատարել Սուրմալուի գաւառում, որոնց դէմ մաքառելու միջոցներ երբեմն ցոյց են տուել երկրագործութեան հրահանգիչները։ Եւ ահա, այդ փորձերից խրախուսված՝ Իգդիրմաւեցի Յակոբ Փանոսեանը առաջինը բերել տուեց պ. Լեւոն Խան-Աղեանի միջոցով վերմօրելի սրսկիչ մեքենան և սկսեց գործել։ Խաղողի որթները սրսկելուց յետոյ նա սրսկեց դեղձենու տերեւները, որոնք նոյնպէս հիւանդութեան ենթարկվելով բոլորովին կնճռվել էին. սրսկումից երեք օր անց՝ բոլոր կնճիռներն արձակվեցին և նախկին առողջ դիրքն ստացան։ Սա ուրախալի երևոյթ է և առաջին ինքնաբերաբար ձեռնարկողը մեծ շնորհակալութեան արժանի. օգտակար օրինակը անշուշտ հետևողներ կունենայ։

Երկրորդ ուրախալի երևոյթն այն է, որ Սուրմալուի գաւառի Ալիղամարլու գիւղում ուսուցիչ պ. Մարկոս Բաղալեանը առաջին անգամ սկսեց պարապել մեղուապահութեամբ և ամեն կերպ աշխատում է ծանօթացնել գիւղական ժողովրդին և աշակերտներին գիւղատնտեսութեան այս ճիւղի հետ, ապացուցանելով սրա վերին աստիճանի օգտակարութիւնը։ Բացի մեղուապահութեանը հմուտ լինելուց՝ նա մեծ ընդունակութիւն ունի իր իմացածը հետաքրքիր դարձնել ժողովրդի համար։ Հին տեսակի փեթակների հետ նա ի ցոյց է դրել նոր և կատարելագործված փեթակներ մեծ առաւելութիւններով, որոնց շինողը հէնց ինքն է և շինում է բոլորի ներկայութեամբ։ Պ. Բաղալեանի փեթակների առաւելութիւնը նրանումն է, որ նոր տեսակի փեթակները շատ տեղերում արժենում են 6—15 ր., իսկ պ. Բաղալեանի նոր տեսակի փեթակները արժեն 1 ր. 50 կ.—2 ր. և յարմարեցրած են բոլոր նոր պահանջներին։ Սա մեծ յարմարութիւն է աղքատ գիւղացիների համար։ Առաջին փորձը աջող է գնում. ստացվեցին առաջին ձագերը շատ կանոնաւոր կերպով։

Չը մոռանամ ասել, որ պ. Բաղալեանի արդիւնաւէտ գործունէութիւնը շատ սեւահոգիների չար նախանձն է շարժել։

Պ. Մարկոս Բաղալեանը մի բացառիկ երևոյթ է մեր գիւղական ուսուցիչների մէջ.—կանոնաւոր դասաւանդութիւնից դուրս (առանց որ և է պատժի, որ անհրաժեշտ պայման է գիւղական ուսուցիչների համար) պարապում է աշակերտների հետ պարտիզպանութեամբ. հրաւիրելով տեղացի աւագ տանուապետ Յովհաննէս Արմզանեանին, իր մասնակցութեամբ, ընտելացնում է աշակերտներին զինավարժութեան և մարմնամարզութեան, որի մէջ մեծ առաջադիմութիւն են ցոյց տալիս սովորողները։ Բացի այդ բոլորից՝ սովորեցնում է աշակերտներին կազմարարութիւն։ Երջանիկ կը լինի այն ժողովուրդը, որի բոլոր ուսուցիչները այդպիսի սիրտ և հոգի կունենան։

Շերամապահութեամբ Սուրմալուի գաւառում պարապելիս են եղել և պարապում են այժմ հատ ու կտոր, աննշան կերպով. թթենիներ շատ սակաւ են։ Քսան և հինգ տարի առաջ կալուածատէր Ալեքսանդր Մելիք-Վարդանեանը թթենիների մի ընդարձակ անտառ տնկելով, կամենում էր կանոնաւոր շերամապահութեամբ պարապել. մի տարի մինչև անգամ մի ֆունտ սերմ բաց արեց. դժբաղդաբար, կանոնաւոր շարունակութիւն չունենալու և զարկ չը ստացաւ դրանից շերամապահութիւնը։

Անցեալ տարի օր. Շուշանիկ Յարութիւնեանը և տ. Զարուհի Աւագեանը փորձ արեցին կանոնաւոր կերպով շերամապահութեամբ պարապել. իբրև նոր փորձ շատ արգելքների հանդիպելով՝ դարձեալ կարողացան մի մսխալից քսան ֆունտ բերք ստանալ։ Այս տարի Իգդիրի ուսումնարանի վարժուհի օր. Մարիամ Բաբայեանը փորձեց պարապել շերամով ամենակատարելագործված պայմաններով, սակայն նրա այդ բարի և օրինակելի ձեռնարկութիւնը մի պատուհաս դարձաւ իր գլխին։—Չը նայած ժողովրդական ուսումնարանների վերատեսուչ պ. Վորոբեովի բարեհաճ տրամադրութեան, այն անձինք, որ պարտաւոր էին ամենայն սիրով, ինչպէս բարոյական պարտականութիւն, օգնութիւն հասցնել, ամեն կերպ ճգնում էին խանգարել։ Զարանախանձ մարդկանց յարուցած արգելքները այնպէս յուսահատեցրին օրիորդին, որ նա երրորդ քնից յետոյ իսկ ուզում էր ոչնչացնել որդները. և այդպէս էլ կը լինէր, եթէ օրիորդին օգնութեան չը գար տ. Սալոմէ Ջրչինաձէն (գաւառական քննիչի կինը)։

Շատ շուտ տեղացող անձրեւները թէպէտ ցանքերին աջող բերք են խոստանում, բայց սաստիկ խոնաւութիւնից ցորենի արտերում ժանգ է առաջացել, որը կարող է վտանգաւոր լինել մատղաշ արտերի համար. բամբակի աճեցողութիւնը առ այժմ շատ աջող է։ Խաղողը տեղ-տեղ վնասվեց կարկտից։

Ե. Խօջաէնաթեանց

րից է տրւում: 4) Ջրւում են քաղաքի գլխաւոր փողոցները՝ առանձին ջրկիրներով: 5) Որոշւած է ազատել տանտէրերին փողոցները մաքրելու, կարկատելու եւ ծառեր տնկելու պարտականութիւնից եւ այդ ծախսերը կատարել քաղաքի հաշւով: 6) Շինւած են եւ շինւում են հասարակական արտաքնոցներ: 7) Հրաւիրւած է քաղաքի համար մանկաբարձուհի եւ երկու ծաղիկ կտրողներ: 8) Հերթական հարց է հիւանդանոց բանալու հարցը, որի համար պատրաստ կայ 3200 ռուբլուց աւելի դրամագլուխ: 9) Հաստատւելու են անասունների հրապարակ (անասնանոցներ—Скотопригонный и скотозагонный дворъ) եւ ախտահանիչ կայարան (дезинфекціонная камера):

Աղքատների խնամատարութիւն: 1) Հաստատւած է աղքատախնամ հոգաբարձութիւնը, որ սկսել է գործունէութիւն 1900 թւից: 2) Հերթական հարց է քաղաքային անկելանոց բանալը պ. Գ. Մանդալեանի նուիրած գումարով:

Քաղաքային վարչութեան կողմից խնդիրներ են մատուցւած՝ քաղաքի եկամուտները աւելացնելու համար. այն է՝ 1) զինւորականներին տրւելիք բնակարանավարձերի պակասեցնելու մասին. 2) քաղաքացիների անշարժ կալուածքները կառավարութեան գործերում գրաւ ընդունելու մասին: 3) Երկաթուղու միջոցով քաղաք բերւող եւ քաղաքից տարւող ապրանքներից յօգուտ քաղաքին տուրք սահմանելու նկատմամբ, որպիսի տուրքով պիտի շինւեն քաղաքի փողոցները:

Քաղաքը հիմա ունի հետեւեալ դրամագլուխները. 1) պահեստի դրամագլուխ 22,000 ռուբլի, 2) ապագայ քաղաքային բանկի 13,400 ր., 3) ապագայ հիւանդանոցի 3286 ռուբլի, 4) ապագայ միջնակարգ դպրոցի 16,600 ռուբլի, 5) գրադարանի 883 ր., 6) ապագայ կար ու ձեւի դպրոցի 814 ր., 7) Եղիսաբէթ Դոմբեանի յիշատակին նուիրած՝ 530 ռուբլի:

Ոստիկանական վարչութիւնից գործերը ստացած ժամանակ 1897 թւի օգոստոսի մէկից քաղաքի հաշիւը եղել է՝ եկամուտ՝ 47,609 ր.—ծախս՝ 55,386 ռուբլի: Վարչութեան ներկայ 1901 թւի նախահաշիւն է—մուտք՝ 107,143 ռուբլի, ծախս՝ 97,500 ր.:

Վարչութիւնը իր գործունէութիւնը սկսել է 1877 թւի յուլիսի 31-ին. ուրեմն այս 1901 թւի յուլիսի 31-ին լրանում է գործունէութեան չորս տարին:

Քաղաքային վարչութեան վերոյիշեալ գործերը կատարւած են այս չորս տարւայ շրջանում: Վարչութեան գործունէութեան մասին հաղորդածս տեղեկութիւնները քաղել եմ պաշտօնական թղթերից:

Չորս տարւայ ընթացքում այսպիսի մի գործունէութիւն կարծում եմ մի գաւառական քաղաքի համար ուժից վեր բան էր:

Ընտրող

Ալէքսանդրապոլ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Մայիսի 29-ին

Որչափ էլ վշտանում ենք ու վրդովւում, տեսնելով մեր հոգաբարձուների, երէցփոխների եւ, ընդհանրապէս, ազգային եւ հասարակական, մանաւանդ անվարձ պաշտօնեաների անխիղճ զեղծումները, անպատկառ կեղեքումները ու յափշտակութիւնները, նոյնչափ էլ մխիթարւում ենք, տեսնելով նրանց շարքում եւ այնպիսիներին, որոնք իբրեւ իսկական մարդիկ եւ ժողովրդի հաւատարմատարներ, անբիծ կատարում են իրանց վրա դրւած սուրբ պարտականութիւնը:

Հաշւետւութիւն ասւած գաղափարը օրէցօր մարմնանում է եւ մեզ մօտ: Իբրեւ բարի օրինակ ուրիշների համար կարող է ծառայել Մեղրեցոց եկեղեցու երէցփոխ պ. Ի. Զուրաբեանցի «Համառօտ հաշիւը», տպագրւած մի մեծ թերթի վրա եւ վաւերացրած երկու հաշւետեսների ստորագրութեամբ:

Այդ հաշիւը դրւած է հասարակութեան առաջ՝ հրապարակի վրա եւ ստանում են անխտիր բոլոր եկեղեցիների ծխականները: Այս հանգամանքը կարող է միայն պատիւ բերել երէցփոխ պ. Զուրաբեանցին:

Աւելորդ չեմ համարում այդ համառօտ հաշւից քաղել եւ բերել այստեղ մի երկու համառօտ տեղեկութիւններ:

Վերեւ յիշած Մեղրեցոց եկեղեցին ունեցել է առ 1-ն յունվարի 1898 թ. դրամագլուխ 6451 ր. 85 կ., որ աճել է եւ հասել առ 31 դեկտեմբերի 1900 թ. 8641 ր. 86 կ.: Մոմավաճառութեան արդիւնքը նոյնպէս աճում է տարուց տարի: Գ. Մալխասեանցին տրւած է գրաւականով (խանութներ) 4000 ր. 8% տոկոսով, որից ապահովութեան եւ այլ ծախքեր հանելով եկեղեցու հաշւին, մնում է մօտաւորապէս 6%: Աչքի է ընկնում 98 թ. ննջեցեալների վրա դրւած պսակի վարձի փոքրութիւնը՝ 8 ր., որի հետքը հետեւեալ տարիներում այլ եւս չէ երեւում: Եկեղեցին ունի, ի միջի այլոց, եւ արքունական արժէթղթեր եւ խաղատոմսեր, որոնք բերում են տոկոս: Տոկոս տալիս է եկեղեցու օգտին եւ նոյն ինքը, երէցփոխը, իր մօտ գտնւող առձեռն դրամի համար: Այս հանգամանքը մեր աչքում ունի բացառիկ մեծ նշանակութիւն եւ մենք չեշտելով նրա վրա՝ անկարող ենք չարտայայտել հրապարակօրէն մեր անկեղծ գոհունակութիւնը: Ծախսերի մէջ չը կայ մի այնպիսի արժանաւոր, աչքի ընկնող կէտ, որի մասին հարկ լինէր յիշատակել:

Ամբողջ հաշւի մէջ մի յօդւած գրաւեց մեր ուշադրութիւնը:

Որքան արժէք ունի մեր օրերում Շուշու մէջ Գ. Մալխասեանի գոյքը, որքան զուտ եկամուտ է տալիս նա (հանած քաղաքային եւ ռեմոնտի վերաբերեալ ծախսերը) իւրաքանչիւր տարի, եւ ում անունով է կազմւած կապալագիրը—եկեղեցու, թէ երէցփոխի:

Դառնանք Ագուլեցոց ս. Աստուածածնի մայր եկեղեցուն:

Այստեղ 4—5 տարուց ի վեր երէցփոխի անհասարակ ծանր պաշտօն է վարում պ. Խ. Խաչատրեան: Սակայն մի բան, մի շատ խոշոր բան, ակամայ վարագուրում է երէցփոխի գործունէութիւնը, այն է, որ այսքան տարւայ ընթացքում պարոնը ոչ մի անգամ հաշիւ չէ տւել եկեղեցապատկան գոյքի, նրա մուտքի ու ելքի վերաբերութեամբ:

Պարոնը վարում է մի շատ ծանր բեռ աւելորդ երկու տարի, գուցէ ցանկութիւն ունի շարունակել եւ այսուհետեւ, մենք դրա դէմ ոչինչ չունենք. ընդհակառակը, շատ ուրախ կը լինենք, եթէ այդպէս լինի: Միայն թէ մենք իրաւունք ենք տալիս մեզ պահանջել պ. Խաչատրեանից, իբրեւ կրթւած եւ ուսում առած մի անձից, հաշիւ իր բազմամեայ գործունէութեան մասին:

Լիայոյս ենք, որ պարոնը կը շտապէ կատարել նաեւ իր պարտականութիւններից այս ամենագլխաւորը, որով կը փարատէ ծխականների մէջ յղացած եւ փոքր առ փոքր սպառնացող բնաւորութիւն առած արդարացի տրտունջը:

Իսկ թեմակալ առաջնորդ Գ. եպիսկոպոս Գառնակերեանին կը խնդրէինք եւ խորհուրդ կը տայինք մի փոքր աւելի ուշադիր լինել դէպի իր խնամատարութեան յանձնւած եկեղեցիների շահերը:

Սերմացան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

(Շարունակութիւն)

Ես շատ ուրախ եմ, որ Ախալցխայի 12 անձնեայ հաշւետեսները եւ նրանց թեւ ու թիկունք 155 ստորագրեալները հրապարակով լըսեցին իրանց մեծ պաշտպանից, որ եթէ հաստատվի, թէ նրանց ընտրող ժողովը ապօրինի է եղել, այն ժամանակ պէտք է ամեն բան սկզբից սկսել: Սա շատ կարեւոր է:

«Մշակի» № 99-ում Տ. Ց. շարունակում է իր «Արձագանքները»: Պ. Տ. Ց. իմ՝ «համար ու հաշիւ տալու կը հրաւիրվէն արդարադատութեան առաջ» խօսքերից անախորժ բանը ձեզանից հեռացնելու համար փորձում էք եզրակացնել, թէ ես պիտի դատախազի միջնորդութեան դիմեմ, մատնութիւն անեմ: Մի՞թէ կարծում էք ընթերցողներին այնքան պարզամիտ, որ չը մտածեն, թէ Բաթումի քննիչ քահանան ինչ հաշիւ ունի դատախազին դիմելու. քանի որ նա ոչ շահագրգռւած ախալցխացի է, ոչ անպատիւ եղած երէցփոխ: Ես կը կատարեմ քննութիւններն իմ հասկացողութեան ու խղճի թելադրութեան համեմատ, կը ներկայացնեմ զեկուցումս ծխական ժողովի եւ հոգեւոր իշխանութեան դատաստանին—եւ վերջացաւ պաշտօնս:

Պ. Տ. Ց., «խեղճ, արհեստաւոր» անուանելով հաշւետեսներից շատերին, որ օրէնքի չը նախատեսածը մեկնելու ծանր բանին են կըպչում, լոյսի պէս պարզ է, որ ես հեռու եմ եղել նրանց իբրեւ մարդ, իբրեւ ծխական արհամարհելու մտքից:

Եւ դուք, պ. Տ. Ց., երբ տեսնէք ածխագործին մրոտ ձեռքերով հաց թխելիս, փինաչուն իրաւաբանական սկզբունքներ մեկնելիս, թէկուզ հալալ աշխատանքի անուշ անուշ քրտինքը ճակատից ծոր ծոր թափւող ռամիկ գիւղացուն ձեր թարգմանութիւնների ոճերն ու քերականական դարձւածքները քննելիս, դուք կը գովէք, կը քաջալերէք նրանց այն պատճառով, որ նրանք են հայութիւն կազմողները:

Պ. Տ. Ց., ձեր բերած օրինակներով դուք հաստատում էք, որ գանձապահի, երէցփոխի չը տւած հաշիւները կարելի է մատեաններից դուրս բերել ու քննել, երբ գանձապահը փախած է, թօյն խմած մահացած է, կամ երբ յամառում, չէ կամենում հաշիւ տալ: Շատ ուղիղ է. բայց տեսէք, որ մեր վէճի առիթ դարձած դէպքում այդ պատճառներից եւ ոչ մէկը տեղի չէ ունեցել:

Պ. Տ. Ց., իմ՝ «երէցփոխական եռամեայ ժամանակամիջոցը տակաւին չը լրացած» խօսքերին ձեր ցանկացած գոյնը տալով, գրում էք. «այդ խօսքերը կարող են այն տպաւորութիւնը թողնել ընթերցողների վրա, որ իբր թէ այդ խեղճ երէցփոխից վաղաժամ են հաշիւ պահանջում. մինչդեռ երէցփոխը պարտական է հաշիւ ներկայացնել ամեն տարի եւ այդ երէցփոխը չէ կատարել եւ չէ ուզում կատարել իր այդ պարտականութիւնը»: Լաւ. միտ առէք: Այդ երէցփոխը մտած է պաշտօնի մէջ 1898 թ. յունիսի սկզբին, եւ տարւայ վերջին ստուգել, փակել, վաւերացրել է նրա հաշւեմատեանը ժողովրդից ընտրւած հաշւետես յանձնաժողովը: Ուրեմն պաշտօնավարութեան առաջին մասի հաշիւը եւ տրւած եւ տեսնւած է: Պաշտօնավարութեան վերջին մասինը՝ 1900 թւինը՝ իսկապէս չէր կարելի պահանջել, քանի որ դեռ յուլիս ամսումն էին գտնւում—ուրեմն՝ ըստ օրէնքի տրամադրութեան՝ տարին վերջացած չէր, որ պարտաւոր լինէր հաշիւ տալու. մնում էր միայն միջին ժամանակամիջոցը՝ 1899 թւինը, որ ամեն ամիս ստուգած է եղել գործակալը եւ որ պիտի ներկայացնէր 1900 թ. մէջ ծխական ժողովին: Ծուխը նրան չէ յիշեցրել. նրա մերժումը չէ լսել, որ իրաւունք համարէինք մեղադրելու, թէ չէ ուզում հաշիւ տալ: Հաշւետեսները նոյն իսկ լոկ քաղաքավարութեան համար չեն առաջարկել նրան կազմելու հաշւեկշիռը եւ ներկայացնելու մատենի հետ. այլ ամսի 9-ին ընտրվել են եւ 12-ին բոլոր կազմութեամբ ներկայանալով պահանջել ու ստացել են երէցփոխի բոլոր տարիների հաշւեմատեանները: Ի՞նչպէս է դուր գալի հաշւետեսների վարմունքը ձեզ. ձեզ, որ այնքան սիրում էք արեւմտեան Եւրոպայի ազատականութիւնից եւ ջենտլմենութիւնից խօսել:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունիսի 1-ին, ինչպէս մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, ներքին գործերի մինիստրութեան բժշկական դէպարտամէնտի մէջ, ընդունելութեան ժամանակ, ցերեկվայ 1 ժամին, դէպարտամէնտի փոխ-դիրեկտոր Լ. Ն. Մալինովսկի, խնդրատուներին ընդունելու համար իր առանձնասենեակից դուրս գալու ժամանակ, ենթարկվեց յարձակման մի մարդու կողմից, որ սպասում էր նրա դուրս գալուն ընդունարանի մէջ: Անծանօթը զինւորւած էր դանակով, որով Մալինովսկուն թեթեւ վէրք հասցրեց ձեռքին: Չարագործին իսկոյն կալանաւորեցին եւ զինաթափ արին: Սպանութեան փորձի պատճառը յայտնի չէ: Պ. Մալինովսկու վէրքը վտանգաւոր չէ:

—

Մոսկվայի համալսարանի խորհուրդը մի քանի նիստերում քննում էր համալսարանի ռեֆորմի մասին մինիստրի առաջարկած հարցերի պատասխանը: Բացի դրանից պրոֆէսորներից սկսվեցին առանձին կարծիքներ ստացվել: Այդ բոլորը մի սիստէմի վերածելու համար խորհուրդը ընտրեց չորս հոգուց բաղկացած մի յանձնաժողով:

—

Երեքշաբթի, յունիսի 5-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում Պրավդինի խմբի երրորդ ներկայացումն էր: Խաղում էին Իւժինի «Мужъ знаменитости» կոմեդիան: Ինքը պիեսը հանդիսականի վրա տպաւորութիւն չէ թողնում, որովհետեւ չէ պարունակում տիպեր, բնական դրութիւններ: Տեսարանները մէկը միւսին հետեւում են՝ առանց մի ներքին սերտ կապ ունենալով. գեղեցիկ բառեր, ֆրազներ, անտեղի սրամտութիւններ: Պրավդինի խմբի շնորհիւն էր, որ այդ պիեսը մի որոշ չափով կենդանութիւն ստացաւ: Այդ խմբի անսամբլը, համերաշխ, ներդաշնակ խաղը հիանալի էր. ամենաերկրորդական դերերն անգամ կատարում էին շնորհալի դերասաններ: Որքան բան կարող էր սովորել հայ դերասանական խումբը, տեսնելով որ պիեսի ամբողջ ծանրութիւնը տանում են միմիայն երկու-երեք անձինք: «Мужъ знаменитости»-ի մէջ Եաբլոչկինա ցոյց տուեց աւելի ոյժ, աւելի աշխուժութիւն, աւելի կենդանութիւն, քան Զուդերմանի «Մոնդավայրում»: Պրավդին գերմանացի երաժշտի թէեւ փոքրիկ, աննշան դերի մէջ, բայց աննման էր. նրա գրիմը, արտասանութիւնը, բացականչութիւնները ներկայացնում էին մի շատ տիպիկական գերմանացի: Պ. Իլինսկի՝ Նեգլօբինի դերը խաղաց զգացմունքով: Աջող էին պ. Խուդոլէեվ՝ Պրոտօրեվի եւ պ. Սլավին՝ լակէյի դերերում: Հասարակութիւնը աւելի շատ էր, քան նախընթաց ներկայացումներին:

—

Ալէքսանդրապոլից պ. Դաւիթ Արամեանց «Մշակի» այս տարւայ մի օրինակ նւիրեց Շուշու գաւառի Քեաթուկ գիւղի հայ հասարակութեան:

—

Բագւում այս տարւայ սեպտեմբերից բացւող առեւտրական դպրոցի համար, ինչպէս հաղորդում է տեղական լրագիրը, հաշւած է ծախս 85 հազար ռուբլի: Աշակերտների թիւը որոշւած է 850.

—

Ինչպէս յայտնի է, մտադրութիւն կար միջնակարգ դպրոցներ բանալ երկու բաժանմունքով՝ լատինական լեզուի բաժանմունքով եւ հայրենագիտութեան ու օրէնսգրութեան բաժանմունքով: Այժմ, ինչպէս լսել է «Русск. Вѣд.» լրագիրը, մտադրութիւն կայ լատիներէն լեզուն ըէալական բաժանմունքում փոխարինել երկրորդ նոր լեզուով, իսկ հայրենագիտութիւնը եւ օրէնսգիտութիւնը, որպէս շատ անհրաժեշտ առարկաներ, մտադրութիւն կայ մտցնել երկու բաժանմունքներում եւս: Հայրենագիտութիւնը պէտք է ծանօթացնէ աշակերտներին ստատիստիքական, տնտեսական եւ էտնօգրաֆիական փաստերի հետ Ռուսաստանի մասին, իսկ օրէնսգիտութեան ուսումնասիրութեամբ նրանք կը ծանօթանան իրաւունքի, պետական կազմակերպութեան եւ դատավարութեան հասկացողութիւնների հետ: Պրոֆէսոր Վինօգրադով օգտաւէտ էր համարում հայրենագիտութիւնը կապել աշխարհագրութեան հետ, իսկ օրէնսգիտութիւնը—պատմութեան հետ:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Տ. Սիրանոյշի խմբի ներկայացումները շարունակւում են: Ի միջի այլոց պ. Պետրոսեանի բենեֆիսին խաղացին «Կեանքի արժէքը», տ. Սիրանոյշի բենեֆիսին «Սաֆօ», որի ժամանակ ստացաւ մի երկու ընծայ: Այսօր երկրորդ անգամ տրւում է «Մէդէա»:»

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մշակի» № 106-ի մէջ յայտնել էի, որ ժողովրդի բուռն ցանկութեան եւ որոշման համաձայն, վերանում է մեր եկեղեցում գանձանակ պտըտեցնելու տգեղ սովորութիւնը: Այժմ, ի զարմանս «Մշակի» ընթերցողների, պէտք է յայտնեմ, որ Ալէքսանդր Տէր-Մկրտչեան Տէր-Սարգսեան Պարգեանցը, ծխականների այդ որոշման դէմ ժողովում է 20—25 ստորագրութիւն, մեծ մասամբ կանանցից եւ ոչ-ծխականներից եւ բողոքում է Վեհափառ Կաթուղիկոսին, խնդրելով հրաման՝ գանձանակագրամը նախկին ձեւով ժողովելու համար: Վեհափառ Կաթուղիկոսը, առանց քննութեան եւ հարցուփորձի, մօտ 200 ծխականների միաձայն որոշման դէմ յարգում է 25 ստորագրութիւն կրող բողոքները եւ կոնդակ է ուղարկում տեղիս յաջորդին՝ գանձանակագրամի ժողովելը նախկին ձեւով շարունակելու համար:»

—

Նոր-Բայազէտի գաւառի ՎԵՐԻՆ-ՂԱՐԱՂՈՒԼ գիւղից մեզ գրում են. «Թազաքենդ գիւղից 5 վերստ հեռաւորութեամբ գտնվեց մի դիակ, որը, բժշկի ասելով, 4—5 ամսվայ մահացած է: Ոստիկանութիւնը քննութիւն է կատարում իմանալու համար դիակի ով լինելը: Գազանները կերել են դիակի երեսը, ձեռքերը եւ ուրիշ մասերը, այդ պատճառով շատ դժուար է ճանաչել նրան»:

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Թիֆլիսի ցուցահանդէսի մասնաժողովը ուղարկել է այստեղ գիւղատնտես Ս. Բաչինջաղեանին էքսպօնէնտներ գտնելու ցուցահանդէսի համար: Այդ առթով նորերս այստեղ գաւառապետ Դէմենսկին նիստ կայացրեց. այդ նիստում ընտրվեց նախագահ հարկերի տեսուչ պ. Վէկշինսկին, որը ծրագիր է կազմելու: Շատերը պատրաստւում են այստեղից մասնակցելու ցուցահանդէսին»:

—

ԳԷՏԱՐԷԿԻՑ մեզ գրում են. «Յունիսի 1-ին, անձրեւի ժամանակ, Դուզի-Իւրդ կոչված տափարակում կայծակին զոհ են գնացել երկու թուրք հովիւներ. Ղալաքենդում եւս սպանվել են կայծակից երկու թուրք: Ասում են, որ Գետաբէկի անտառումն էլ երկու թուրք են սպանվել կայծակից հէնց այդ օրը: Ամեն տարի այս ժամանակներում մեր կողմերում միշտ մի քանի Թուրք հովիւներ զոհ են գնում կայծակին»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են. «Դժբաղդութիւն ունեցայ ներկայ լինել հռչակաւոր Իգդիրմաւայ գիւղի երկու քահանաների հաշուատեսութեան. Նրանք երկուսով մէկ ամիս եւ քսան երեք օրում 3 ր. 80 կ. եկամուտ չեն ստացել»։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Յունիսի 1-ին, երեկոյեան ժամը 5-ին, այստեղից 11 վերստ հեռաւորութեան վրա «Մախարէ-Մուխա» կոչված տեղում Թիֆլիսից Սղնախ եկող դիլիջանի վրա յարձակվում են հինգ զինաւորված Թուրք աւազակներ եւ հրացաններն ուղղելով ճանապարհորդների վրա՝ պահանջում են դիլիջանը կանգնեցնել։ Կոնդուկտորը կանգնեցնում է կառքը. աւազակները պահանջում են ճանապարհորդներից՝ յօժարակամ յանձնել իրանց բոլոր ունեցածը, սպառնալով, հակառակ դէպքում, հրացանազարկ անել հակառակողին։ Ճանապարհորդները հնազանդվում են։ Աւազակներն առնում են նրանցից նրանց ունեցած փողերը, ժամացոյցները մատանիները, վերարկուները եւ ուրիշ հարկաւոր իրեր։ Կողոպտելով այդ դիլիջանը, աւազակները հրամայում են սպասել մինչեւ ժամի 7-ը։ Վրա է հասնում երկրորդ դիլիջանը, որն առաջինից աւելի վատթար վիճակի մէջն է ընկնում։ Աւազակները սրան եւս կողոպտում են, առնելով ճանապարհորդներից համարեա նրանց բոլոր ունեցածները եւ դիլիջանը նոյնպէս կանգնեցնում։ Քիչ ժամանակ յետոյ գալիս է պօստի դիլիջանը. սա, բարեբաղդաբար, սակաւ է տուժում։ Աւազակները չտապելուց ձեռք չեն տալիս կապոտած սնդուկներին, միայն բաւականանում են փողեր, կանանց զարդեր, վրան ունեցած իրեր առնելով։ Աւելի տուժում է այստեղ Լագոդաղի վաճառական Նարինեան, որից աւազակները առնում են 50 ր. փող, մատանի, ժամացոյց, ճանապարհորդական կօշիկներ եւ պայուսակ։ Բարեբաղդաբար, ազատվում է պօստի պայուսակը, շնորհիւ կոնդուկտօրի, որը աւազակներին ասել է, որ դրանում փող չը կայ, այլ լրագիրներ եւ նամակներ, որի համար նրանք «խաթաբալայի» մէջ կընկնեն։ Կողոպտելով այս կերպով երեք հանրակառք, աւազակները խլում են մի ձի, բարձում են նրա վրա աւարը, լցնելով նոյնպէս կողոպտված իրերով իրանց խուրջինները։ Աւազակներից մէկը մի կոնդուկտօրին ընծայում է փղոսկրեայ խաչ։ Սրանից յետոյ աւազակները թոյլ են տալիս դիլիջաններին գնալ, բայց որպէս զի նրանք չը քշեն կառքերը, իրանք հետեւում են $^{1}/_{2}$ վերստ, հրամայելով կամաց գնալ։ Ապա ձիաների երեսը դարձնելով արշաւում են դէպի Միլանի անտառը։ Կառքերի կողոպտելու ժամանակ աւազակները կողոպտում են անցնող երկու սայլապանին, ֆուրգօնչչիկին եւ անցորդներին։ Կողոպտված դիլիջանները հասան Սղնախ երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին։ Ոստիկանութիւնը իսկոյն արձանագրութիւն կազմեց. ուղարկվեցին անմիջապէս չափարներ աւազակներին հետամուտ լինելու։ Կառքերում եղել են 20 ճանապարհորդներ. դրանց թւում վրացի սեմինարիստներ, կանայք եւ ուրիշներ։ Կողոպտված իրերի եւ փողերի գումարը 600 ր. աւելի կը լինի։ Այսօր լսվեց, որ նոյն աւազակները նոյն գիշերը յարձակվել են մի հովիւի վրա, բայց ոչինչ չը տանելով, խլել են դաշտային պահապանից ձի եւ արշաւում են դէպի Եօրա գետը։ Ճանապարհորդների ասելով, աւազակները գալիս են եղել հեռաւոր տեղից. նրանցից մէկը իմացել է եւ ռուսերէն։ Այսօր անցքի տեղը ուղեւորվեց Սղնախի գաւառապետը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Պարիզ, յունիսի 5-ին

Ամենէն դժբաղդ մարդը, որ գոյութիւն ունի այս պահուս Ֆրանսայի մէջ, ապահովաբար Լիւռ Սալիւսի կոմսն է։

Այս ազնուական, ինչպէս ընթերցողները գիտեն, երկու տարի առաջ հանրապետութեան դէմ սարքված դաւադրութեան իբրեւ մասնակից՝ բարձրագոյն ատեանէն, Բիւֆէի, Դէրուլէդի եւ Գէրէնի հետ դատապարտուած էր, ի բացակայութեան։

Արդ, հերոսի մը պէս, որ վտանգին դէմ կը վազէ, այս արքայական կոմսը վազած Պարիզ եկած էր, խորհելով, որ Ֆրանսայի հանրապետական կառավարութիւնը սարսափելի իրարանցումի մը մէջ պիտի դնէ իր ներկայութեամբ։ Ազնուականի խելք։

Բայց եկէք տեսէք, որ կառավարութիւնը հոգը անգամ չըրաւ այս՝ իր քէֆը ուզած ատեն պատուել ուզող դաւադրի մասին։ Ոչ միայն իր դատովը զբաղվող չը կայ, այլ եւ մինչեւ այսօր տակաւին զինքը ձերբակալելու պատիւն իսկ չեն ըրած իրեն։ Պ. Սալիւս՝ շաբաթներով իր տունը սպասելէ յետոյ ձերբակալող ոստիկանին, որ սակայն կը յամառի իրեն չը ներկայանալ, սկսաւ պարզ մահկանացուի մը պէս Պարիզի մէջ ման գալ, ամեն կիրակի պատարագի ներկայ գտնվիլ, յոխորտալով այնպիսի խաղք-խայտառակ հանրապետութեան մը դէմ, որ զինքը ձերբակալելու հասարակ քաջութիւնն իսկ չունի։ Բայց քիչ յետոյ համոզվեցաւ թէ իր հերոսական ընթացքը երկրին մէջ փոխանակ խանդավառ հիացումներով ողջունվելու, արհամարհալից ծիծաղով միայն ընդունված էր։

Սալիւսի կոմսը Ֆրանսա մտնելով, Վալդէկ Ռուսօյի դահլիճին գէշ խաղ մը կը կարծէր խաղալ։

Կրօնական միաբանութեանց դէմ պատրաստուած օրէնքը խորհրդարանէն քուէարկված էր։ Անիկա այս վայրկեանին կը գտնվի սենատի սեղանին վրա։ Երբ սենատը զայն վաւերացնէ, ալ օրէնքի ուժ պիտի ստանայ։

Լիւռ Սալիւսի կոմսը Պարիզ դառնալով կը խորհէր սենատը բռնադատել զբաղվելու իր դատով եւ հետեւաբար բարձի թողի ընել տալ այն օրէնքը, որ երկիւղած, բարի ու բարեպաշտ մարդերու շահատակութեանցը սահման մը կուզէ գծել։

Ո՞վ գիտէ, կը մտածէր խորամանկ ու խելացի կոմսը, թէ երբ կաւարտի իմ դատս. կրցածիս չափ վկայ կանչել կուտամ, դատավարութիւնը քաշքշելու համար ամէն ճիգ կը թափեմ, մինչեւ որ խորհրդարանական արձակուրդները վրա հասնին։ Անկէ յետոյ ալ դիւրին է. հարկաւ, Աստուած իրեններ կը պաշտպանէ։ Վալդէկի կառավարութիւնը կը տապալվի, օրինագիծը ջուրը կիյնայ ու ես, մեծաւոր Սալիւսս, փրկիչը կը հանդիսանամ Փրկչին ծառաներուն։ Կաթօլիկ եկեղեցին ալ օրհնութիւն չի գտներ ինձի չնայելու, ոչ միայն իմ, այլ իմ ամբողջ անցեալ, ներկայ ու ապագայ սերունդիս մեղքը գնած կըլլամ։ Ամէն։

Գէթ անգամուան մը համար, չարաճճի կոմսը համոզվեցաւ, թէ այնքան ալ խորամանկ չէ ինք։ Որովհետեւ, հակառակ ազգայնական թերթերու ըրած ահագին աղմուկին, կառավարութիւնը սուս խուլ, սուտ կոյր ձեւացաւ ու մարդ չը ղրկեց զինքը իր երազներուն մէջ անհանգիստ ընելու։

Խեղճ կոմս։ Կարծես թէ առաջուանէ գլխուն գալիքը իմանալով, նախազգուշութիւնն ալ ունեցաւ իր Պարիզ ժամանումը ծանուցանել փողով ու թմբուկով, որպէս զի ստիպէ կառավարութիւնը իրմով զբաղվիլ։

Արդարեւ, ահաւասիկ այն ամբարտաւան նամակը, զոր ուղղեց պ. Ֆալիէռի՝ բարձրագոյն ատենի (սենատ) նախագահին.

«Պարոն նախագահ,

«Այն պահուն՝ ուր հանրապետութեան կառավարութիւնը աւելի քան երբէք յամառօրէն կաշխատի կործանել ճարտարարուեստն ու վաճառականութիւնը, ազգային աշխատանքը անդամալուծելու, կազմալուծելու բանակը, ջնջելու կրօնական հաւատքը, մէկ խօսքով ոչնչացնել հայրենիքն իսկ, ես կը փափագիմ վերստին բարձրագոյն ատեանին առջեւ բանալ հրապարակային վիճաբանութիւն մը ցուցնելու համար, թէ ո՞ր կողմէն են Ֆրանսայի սպառնացող դաւադրութեան հեղինակները։

«Պատիւ ունիմ ուրեմն ձեզի ծանուցանելու, թէ ես ինքզինքս կը դնեմ ձեր տրամադրութեան տակ.

«Ընդունեցէք...

«Կոմս Էօժէն դը Լիւռ Սալիւս»։

Նմանապէս պ. կոմսը գրեթէ մի եւ նոյն ձեւով եւ չեչտով խմբագրված նամակ մը ղըրկեց պ. Վալդէկ-Ռուսոյի։

Այս երկու նամակները իրենց հասցէին նամակատուն ձգելէ յետոյ պ. կոմսը՝ հանդարտ հանդիսական ու վեհաշուք՝ սպասեց այն մարդուն, որ պիտի ըսէր իրեն. «յանուն օրինաց կը ձերբակալեմ ձեզ»։

Բայց գիշերները տարիքներուն յաջորդած են, պ. կոմսին բնակած մոլորակը քանէ աւելի անգամ արեւին շուրջը թաւալած է ու տակաւին ոչ մէկ ոստիկան իր քիթը դրաւ պ. կոմսին դանէն ներս։

Սենատը կատարեալ անդորրութեամբ մը իր օրակարգին խնդիրներովը կը զբաղի։ Ընկերակցութեանց օրէնքին վիճաբանութեանցը համար հարկ եղած յանձնաժողովը կազմված ու տեղեկաբերն ալ նշանակուած է։ Խօսք կայ, որ արդէն մինչեւ յունիսի 24-ը վիճաբանութիւններն աւարտին ու օրէնքը քուէարկվի։

Իրաւունք չունէի ըսելով՝ Ֆրանսայի ամենէն դժբաղդ մարդը կոմս Էօժէն դը Լիւռ Սալիւսն է։

Այսօրուան լրագիրները կը ծանուցանեն, թէ Լիւռ Սալիւսի կոմսը վերջապէս մուրազին հասած է։ Բարձրագոյն ատեանի ընդհանուր դատախազին, պ. Օկթավ Բէռնարի՝ ձերբակալման հրամանագիրը ձեռքը պ. Ամառ, ապահովութեան տէր—տնօրէնը երէկ իրիկուն ներկայացեր է պ. կոմսին բնակարանը։ Պ. կոմսը նախ շատ յուզուել է ու յետոյ, մելամաղձոտ՝ թրջված ձայնով մը աղաղակեր է.

—Շատ կանուխ կամ շատ ուշ կը ձերբակալէք զիս։

Յետոյ թոյլտուութիւնը խնդրեր է հրաժեշտ առնել իր ընտանիքէն։ Պ. Ամառի հաճութեան վրա, կինն ու զաւակները քովը բերել տուեր է, իրարու հետ համբուրվեր են, մահուան պատրաստուող մարտիրոսի մը խաղաղութեամբ իր փաստաբանին նամակ մը գրեր է իր ձերբակալումը տեղեկացնելու համար։

Յետոյ նոյնքան խաղաղութեամբ ճաշելու նստեր է։ Պ. Ամառ, բնականաբար կոմսի մը վայել քաղաքավարական պարտականութիւններէն եւ ոչ մէկուն մէջ թերացեր է. ձգեր է, որ հանդարտօրէն պ. կոմսը ճաշէ։ Ներելի է ազնուականի մը հետ վարուիլ, իբրեւ պարզ մահկանացուի մը հետ։ Պ. կոմսը ճաշն աւարտելէ ու սիգառը վառելէ ետք հաճեր է, որ զինքը առաջնորդեն իրեն յատկացուած նոր բնակարանը։ Աւելորդ է ըսել թէ, ինչպէս քիչ մը վերը բացատրեցի, կրօնական վիճաբանութիւններու օրէնքը այս ձերբակալումով ոչ մէկ յապաղում պիտի կրէ։ Սենատը պիտի զբաղի նախ այս խնդրով, յետոյ երբ 24-ին աւարտէ, ձեռք պիտի առնէ պ. Սալիւսի դատը։ Պ. կոմսը սպասելու ժամանակ ունի. օրերը շատ տաք են, գէշ չէ, շուքի մէջ է։

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Քրիստիանիայից հեռագրում են, որ Իբսէնի առողջութիւնը շարունակում է լաւանալ։ Հիւանդը ամեն օր զբօսանք է կատարում կառքով։

—Յունիսի 11-ին նոր տօմարով Թագուհի-խնամակալուհին բացեց կորտէսների ժողովի նիստը։ Թագուհին վերջին անգամն էր նախագահում հանդէսին, որովհետեւ եկող տարի չափահաս է դառնում թագաւորը։

—Սպանիական մինիստր-նախագահ Սագաստա սենատօրների եւ պատգամաւորների ժողովի մէջ մի քաղաքական ճառ արտասանեց, որի մէջ խիստ յարձակվում էր կղերականների վրա, որոնք ատելութիւն են սերմանում երկրի մէջ եւ քանդում են ազգային միութեան գաղափարը։

—«Hamburg. Nachr.» լրագրի Լօնդօնի թղթակիցը գրում է մայիսի 1-ից (յունիսի 7-ին) հետեւեալը. «Ժանտախտը այնքան վաղուց է կատաղի կերպով տարածված Հնդկաստանում, որ Լօնդօնում արդէն ընտելացել են նրան եւ այլ եւս չեն վախենում այն տեղեկութիւններից, որոնք ցոյց են տալիս թէ ինչ աւերումներ է գործում այդ հիւանդութիւնը։ Այնուամենայնիւ վերջին հաշիւը հիւանդութեան ընթացքի մասին, որ տպագրված է անգլիական բժշկական ամսագրում, չէ կարող յուզմունք չը պատճառել, որովհետեւ, նայած այդ հաշուին, համաճարակը սաստկանում է Հնդկաստանի բոլոր մասերում չը տեսնված չափերով։ Համարեա երեք տարի այն կարծիքն էր տիրում, թէ տարվայ տաք ժամանակը արգելք է հիւանդութեան զարգացման դէմ, որ աւելի սաստիկ տարածվում է ցուրտ եղանակներին։ Սակայն այժմ բոլորովին հակառակ երեւոյթ է նկատվում. Բոմբէյում հիւանդութիւնը սաստկացաւ, չը նայած շոգերին, իսկ ցուրտ ամիսներում, յունվարին եւ դեկտեմբերին, ժանտախտը աւելի թոյլ էր, քան այժմ։ Տաք եղանակները սկսվելուց ի վեր, փետրվարից, հիւանդութիւնը սաստկացաւ Հնդկաստանի բոլոր նահանգներում եւ այժմ, մի շաբաթվայ մէջ 700 մարդ մեռաւ, երկու անգամ աւելի անցեալ տարվայ թւից։ Վերջին շնչագրութիւնը ցոյց է տալիս, որ Բոմբէյում ազգաբնակութիւնը 50,000 մարդով պակասել է 1891 թւականից, թէեւ սաստիկ արգելված է գաղթելը»։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բիւլլետէն յունիսի 5-ին։ Օգոստափառ Ծնողի եւ Բարձր Նորածնի դրութիւնը շատ գոհացուցիչ է։

Երկու ժամին Պետերհօֆ ժամանեցին Գատչինօից Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան Թագաժառանգի եւ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի հետ։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հեռագրում է Բլումֆօնտէնից, որ վերջին զեկուցումից յետոյ սպանված են 24 բօէրներ, վիրաւորված են 14, գերի են առնված 265, կամաւորապէս անձնատուր եղան 165 մարդ, աւար են վերցված 137 հրացաններ, բազմաթիւ ռազմամթերք, 198 սայլեր, 1500 ձիեր, 3000 գլուխ տաւար։ Սրա մէջ չեն մտնում բօէրների կորուստները Էլլիօտի գործողութեան ժամանակ։

ԼՕՆԴՕՆ։ «Րէյտէրի գործակալութեանը» Կապշտադտից հաղորդում են, որ Դէվէտ ըստ երեւոյթին միայն վերջերս համոզեց բօէրներին, որ նրանք կրկին կենտրոնանան իր հրամանատարութեան տակ, բայց հէնց որ այդ բանը աջողվեց, անգլիացիները յարձակվեցին նրա վրա եւ ցրվեցին նրա ոյժերը։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական կայսերական բանկը իջեցրեց դիսկօնտը 4-ից $3^{1}/_{2}{}^{0}/_{0}$-ի։

ԼՕՆԴՕՆ։ Հրատարակված է հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը. «Վերջին ընդհարումներից երեւում է, որ Շէպէրի զօրաբաժնի մի մասը գրաւեց Մուրրայսբուրգ մայիսի 31-ին եւ կողոպտեց այնտեղ մագազինները։ 150 բօէրներ, Մօրիցի հրամանատարութեամբ, շրջապատեցին բրիտանական 29 մարդուց բաղկացած գիշերապահ զինուորներին, որոնցից երկուսը սպանվեցին, երկուսը վիրաւորվեցին եւ մնացածները գերի տարվեցին։ Կակամարեան շրջանում յանկարծ յայտնվեցին 200 ապստամբներ եւ դիմեցին դէպի հարաւարեւմուտք։ Բոլոր գերի բռնված բօէրների թիւն է 19,242 մարդ»։

ՇԱՆԳՀԱՅ։ Իւանշիկայի մօր մահը, ըստ չինական սովորութեան, պահանջում է նրա հեռանալը իշխանութիւնից երեք տարով։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Մօրից գերի վերցրեց անգլիական գիշերապահ խումբը Կալվինիի մօտ։

ԱՈՒՍՋԻԳ։ Պալատական ճաշից «Հաբսբուրգ» զբօսանաւի վրա եւ փառաւոր լուսավառութիւնից յետոյ կայսրը երեկոյեան 10 ժամին այստեղից ճանապարհ ընկաւ Վիէննա մինիստր-նախագահի ուղեկցութեամբ։ Կայարանից անցնելը նման էր յաղթական ընթացքին։ Կայսրը բուրգօմիստրին եւ եւ փոխարքային յայտնեց իր կատարեալ գոհունակութիւնը հայրենասիրական ցոյցերի առիթով եւ շնորհակալութիւն յայտնեց իր անցկացրած գեղեցիկ օրերի համար։

ԿՐՕՆՇՏԱԴՏ։ Երկու անգամ փորձ եղաւ Բէյերին յետ մղելու Զանդրիվէրպուլից, ուր նա դեռ եւս բանակ ունի դրած։ Երկու փորձերի հետեւանքը միայն այն եղաւ, որ վերցվեցին մի քանի գերիներ եւ մի քանի գլուխ տաւար։ Գնդապետ Գրէնֆէլ, Մակ-Միկկինգ, Վիլսօն եւ Կօլէնբրանդէր մասնակցում էին կուին։

ՊԱՐԻԶ։ «Րէյտէրի գործակալութիւնը» անհիմն է անուանում մի քանի լրագիրների հաղորդած տեղեկութիւնը այն բանի մասին, որ իբր թէ ֆինանսների մինիստրը մինիստրների խորհրդին առաջարկել է մի օրինագիծ՝ շաքարային պրէմիաները վերացնելու կամ պակասեցնելու մասին։ Մինիստրների խորհուրդը,—ասում է «Հաւասի գործակալութեան» լուրը,—առաջվան պէս այն կարծիքի է, որ շաքարային պրէմիաների հարցի լուծման ժամանակ պէտք է ուշադրութեան առնվի այն դրութիւնը, որի մէջ դրված են ֆրանսիական շաքարագործարանատէրերը ուրիշ երկիրներում շաքարային արդիւնաբերութեան համար մտցրված դրութեան պատճառով։

ՊԵԿԻՆ։ Վարձատրութեան քանակութեան եւ նրա համար $4^{0}/_{0}$-ի վճարելու վերաբերմամբ գրեթէ համաձայնութիւն է կայացել, միայն Եապօնիան է դեռ դժուարութիւններ յարուցանում, որովհետեւ չէ կարող $5^{0}/_{0}$-ից պակաս շահով փող տալ։ Դեսպանների մեծամասնութիւնը ցանկութիւն է յայտնում բաւարար կերպով լուծել այդ հարցը։ Ամերիկայի ներկայացուցիչ Ռօկգիլ համաձայնութիւն յայտնեց մաքսահարկը $5^{0}/_{0}$-ով բարձրացնելուն, եթէ Չինաստանը պատրաստակամութիւն յայտնէ լայնացնել Եանցզէ եւ Պէյխօ գետերի դաշտերը, մաքրել նրանց յատակը եւ բարեփոխութիւններ մտցնել մաքսային սակագնի մէջ։ Դեսպանները անկասկած են համարում, թէ բոլոր օտարազգի զօրքերը, բացի դեսպանական պահապաններից, կը հեռանան Պէկինից օգոստոսի վերջին։

ՊԱՐԻԶ։ Այսօր Ելիսեան պալատում մինիստրների խորհրդում Լուբէ ստորագրեց այն հրամանագիրը, որով Րէվուալ նշանակվում է Ալժիրի ընդհանուր—նահանգապետ։ Դէլկասէ հաստատեց, որ դեսպանները Պէկինում համաձայնութեան են եկել Չինաստանի վճարելիք վարձատրութեան ձեւի, ինչպէս նաեւ այդ վճարման երաշխաւորութեան վերաբերմամբ։

ՊՐԱԳԱ։ Կայսերական հրովարտակով, որ ուղղված է նահանգապետին, շնորհակալութիւն է յայտնվում Չեխիայի երկու ազգութիւնների կողմից արտայայտված հաւատարմական եւ անձնուիրական զգացմունքների համար։ Այնուհետեւ յոյս է յայտնված, թէ երկիրը շուտով կարժանանայ բաղձալի ազգային հաշտութեան, որի համար ճանապարհ է բացված այդ երկու ազգութիւնների աջող մերձեցմամբ։

ԿԻԼ։ Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայեւնայի ծննդեան առիթով, այստեղ կայանած ռազմանաւերը կէսօրին զարդարվեցին դրօշակներով եւ 21 անգամ թնդանօթ արձակվեցին։

ՊԱՐԻԶ։ Մինիստր Դէլկասէ այսօր երկրորդ անգամ երկարատեւ այցելութիւն արեց ռուսաց դեսպանին, որ բաւական լուրջ օպէրացիայի ենթարկվեց կարբունկուլի պատճառով։ Դեսպանի առողջութիւնը դէպի լաւն է գնում, բայց բժիշկները խորհուրդ են տուել նրան բոլորովին հանգիստ մնալ երկու շաբաթվայ ընթացքում։

ՍԱՐԱՏՕՎ։ Աշնանացանն ու գարնանացանը վատ դրութեան մէջ են։

ԿԻԵՎ։ Գոմէլից շոգենաւով ժամանեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը եւ մանրամասնօրէն զննեց գլխաւոր նաւահանգիստը։ Ժամի երեքին նա շոգենաւով ուղեւորվեց Եկատերինօսլավ եւ ճանապարհին զննեց Կիեվի մօտի շղթայաւոր կամուրջը ու կանոնաւորիչ աշխատանքները։

Սաստիկ շոգից ու չորայնութիւնից յետոյ սկսվեցին անձրեւներ։ Բուսականութիւնը կեանք առաւ։ Անձրեւը նպաստաւոր է ցանքսերի համար։ Անձրեւ գալու մասին տեղեկութիւններ են ստացվում Կիեվի նահանգի զանազան տեղերից։ Հացաբոյսերի դրութիւնը վատ է։

6 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը իր անբաւ ողորմածութեամբ եւ սիրառատ ներողամտութեամբ դէպի ուսանող երիտասարդութեան ոգեւորութիւնները 1901 թւի յունիսի 5-ին Բարձրագոյն հրամայել բարեհաճեց. 1) կայսերական համալսարանների այն ուսանողներին, որոնք արձակված են այդ բարձրագոյն դպրոցներից անկարգութիւններին մասնակցելու համար եւ որոնք ներկայումս զինւորական ծառայութիւն են կատարում որպէս պատիժ, որոնք իրանց ընտանեկան դրութեամբ առաջին կարգի արտօնութիւն ունեն կամ մարմնական պակասութիւններ, որ նրանց անընդունակ են դարձնում զօրքի մէջ ծառայելուն, այժմ եւեթ արձակել ծառայութեան պարտաւորութիւններից։ 2) Այժմ որպէս պատիժ զինւորագրութեան ենթակայ բոլոր մնացած ուսանողների այն իրաւունքները վերականգնել, որ նրանք ունեն զինւորագրութեան մէջ, անկախ զօրքերում նրանց ծառայութեան համար նշանակված ժամանակամիջոցից։ 3) Որպէս օրէնքից բացառութիւն, այժմ զինւորագրութիւնը որպէս պատիժ կրող բոլոր ուսանողների ծառայութեան ժամանակամիջոցը հաշւել նրանց ծառայութիւնը մտնելուց յետոյ եկող ամսվայ առաջին թւից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրը, ի նկատի ունենալով, որ վերջերս շաքարի վաճառման գները անցան 4 ր. 55 կ. սահմանված գնից, հարկաւոր համարեց թոյլատրել ներքին շուկայում բաց թողնելու մէկ միլիոն հինգ հարիւր հազար պուդ ազատ պաշարից եւ անձեռնմխելի պաշարից հինգ հարիւր հազար պուդ, միացնելով այդ երկու միլիոն պուդը ազատ շաքարի հաշւին։

Հակաժանտախտային յանձնաժողովից յայտարարվում է, որ ամբողջ Եգիպտոսը, բացի Պորտ-Սաիդից, Սուէզի ջրանցքից եւ Սուէզից, ժանտախտի կողմից անբարեյոյս են համարվում։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովն ընդունեց աշխատանքին անընդունակ բանւորներին ապահովելու վերաբերեալ նախագծի առանձին յօդուածների քննութեան անյետաձգելիութիւնը։ Ֆինանսների մինիստրը դրանից առաջ ճառ արտասանեց, որի մէջ պաշտպանում էր նախագծի մէջ հիմք դրած սիստեմը՝ ծածկել նրան դրամագլխով եւ յայտնեց, որ այժմ մէջ մտնող օրէնքը հիմնված է եկամուտի աւելորդի վրա եւ նոր հարկեր դնելու կարիք չը կայ։

ԵՕԿՕՀԱՄԱ։ Մօպպօի եապօնական հիւպատոսը, Կորէյայում, հաղորդում է, որ նորերս Կվէլպարտում տեղի ունեցած անկարգութիւնները կատարեցին տեղացիները, որոնց ժամանակ 500 տեղացիներ սպանվեցին։ Եապօնական եւ ֆրանսիական կրէյսէրները դեռ եւս Կվէլպարտում են գտնվում։

Կ. ՊՕԼԻՍ։ Երէկ սուլթանի մօտ ունկնդրութեան ընդունվեց աւստրո-ունգարական դեսպան Կալիչէ, որը, Ֆրանց Յովսէփ կայսրի յանձնարարութեամբ, շնորհակալութիւն յայտնեց Եփեսոսում պեղումներ անելու թոյլտւութեան եւ այնտեղ գտնված առակները սուլթանի կողմից Աւստրիային պարգեւ տալու համար։ Այդ շնորհակալութիւնը առիթ ծառայեց վերանորոգելու բարեկամական արտայայտութիւնները երկու պետութիւնների միջեւ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ջօզէֆ հարցնում է, թէ արդեօք անգլօ-գերմանական համաձայնութեան միջոցով անգլիական կառավարութիւնը հաւատացրեց Գերմանիային, որ նա նոյն իրաւունքները կարող է ունենալ Եանցզէ հովտում, ինչպէս եւ Անգլիան, որքան դա վերաբերում է երկաթուղիական ձեռնարկութիւններին։ Կրանբօրն պատասխանում է, որ անգլօ-գերմանական համաձայնութեան որոշմամբ, առեւտուրը եւ ամեն ուրիշ թոյլատրված տնտեսական գործունէութիւն Չինաստանի գետերի եւ ծովափերի վրա գտնվող նաւահանգիստներում բաց են մնում ամեն տեղ, ուր երկու կառավարութիւնները կարող են իրանց ազդեցութիւնը գործել։

Համայնքների ժողովը երրորդ ընթերցանութեան ժամանակ ընդունեց արքունական պալատին ռոճիկ նշանակելու նախագիծը։

ՄՕԼՏԷՆՕ։ Վերջին տեղեկութիւնների համեմատ, Կապի գաղթականութեան մէջ զէնքի տակ են գտնվում 1800 բօէրներ, որոնք գաղթականութեան ներսում ութ զօրաբաժիններ են կազմում, 60-ից մինչեւ 300 մարդու ոյժով։ Կրոյցինգէր եւ Ֆուշէ շրջաբերականներ են տարածում, որոնց մէջ, Կապի գաղթականութեան հիւսիսային նահանգները Օրանժեան հանրապետութեան հետ միացնելու համար քսան ամիս առաջ իրանց տրված լիազօրութեան հիման վրա, յայտարարում են, որ ամեն մէկը, որ կը հաղորդէ թշնամուն որ եւ է զօրաբաժնի գտնվելու տեղը, 50 ֆունտ ստերլինգի տուգանքով կը պատժվի, իսկ չքաւորութեան դէպքում ստիպված կը լինի բօէրական զօրաբաժնին ոտքով հետեւել երեք ամիս շարունակ։—Զինւորական շրջաններում տիրում է այն կարծիքը, որ ձիերի ներմուծումը չը պէտք է թոյլացնվի, որովհետեւ հէնց գաղթականութեան մէջ ձիերի պաշարը արագ պակասում է։ Թշնամուն աւելանում են զինւորներ, բայց փոքր թւով։

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Այստեղ բոլորովին ոչինչ յայտնի չէ Կարլ թագաւորի Աթէնք ուղեւորվելու դիտաւորութեան մասին։ Նոյնպէս ոչինչ յայտնի չէ ռումինական պաշտօնական շրջաններին յունաց թագաւորի Բուխարէստ գալու դիտաւորութեան մասին։

ԿԱՆԷՑԱ։ Ընդհանուր հիւպատոսները տեղեկացրին արքայորդի Գէօրգին պետութիւնների վճիռը՝ status quo պահպանել կղզու վրա։

ԿՈՒԿՍՀԱՖԷՆ։ Կայսրը ժամանեց այստեղ նաւահանգէսին մասնակցելու համար։ Ամրութիւններից եւ նաւահանգստից թնդանօթաձգութիւն եղաւ ի պատիւ Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլաեւնայի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԷԼԻՑ-ԿԼԻՒՉ ԳՆԱՑՈՂՆԵՐԻՆ

Ֆայէտօնները եւ լինէյկաները ուղեւորվում են ամեն օր Թիֆլիսից դէպի Բէլիյ-Կլիւչ եւ յետ. գնում են նոյնպէս եւ դէպի ուրիշ կէտեր։ Ուղեւորվում են գնացողների հետ համաձայնութիւն կայացնելով։ Գնացողներին խնդրում եմ վաղօրօք վերցնել տոմսակներ։

Հասցէն. На Пескахъ, каравансарай Бектабекова, контора Матинова.

1—1

19-го iюня, въ 10 часовъ утра, въ г. Ростовѣ на Дону, Николаевск. пер., д. Шiяновскихъ, съ публичныхъ торговъ будутъ продаваться писчебумажные товары и конторскiя принадлежности несостоятельныхъ должниковъ К. и А. Иващенко. Товаровъ на 17,000 рублей. 1—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(Зубной врачъ)
Օր. Շ. ՏԷՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ
Ընդունում է հիւանդներին ամենայն օր՝
Առաւօտեան 9—3 ժ.
Երեկոյեան 5—7 ժ.
Հասցէն՝ Սուրբ-Նշան եկեղեցու գաւթում։
1—8

ՀՐԱՒԷՐ

Այսու կրկին առաջին անգամ յարգոյարար հրաւիրվում են Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու բարեպաշտ ծխականները յիշեալ եկեղեցին, ամսիս 10-ին, առաջիկայ կիրակի օր, 12 ժամին, զննելու յիշեալ եկեղեցու 1898 եւ 99 թւականների հաշւեմատեանները։

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեանց

Լոյս տեսաւ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՂԱԲԱԲԵԱՆԻ
ՀԱՒԼԱԽԱՐՅՈՅ ՄՏԱԻՈՐ ԿԵԱՆՔԸ
Գինն է 20 կոպ.
Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական եւ Գուտտենբէրգ գրավաճառանոցներում։
1—3

!!! ՎԵՐՋԻՆ ՀՐԱՇՔ !!!
Ս. Մ. ԱՆԱՆՕՎԻ՝ ՄՕՍԿՎԱՅԻ ԳԻԼԶԱՆԵՐ

Շինվում են ֆրանսիական ամենալաւ «լը Դէրնիէր Կարտուշ» թղթից

Ս. Մ. Անանօվի՝ Մօսկվայի գիլզաները բարակ են, գեղեցիկ, մոխիր չեն թողնում եւ ոչնչացնում են նիկոտինի ներգործութիւնը։

Պահանջեցէք ամեն տեղ Ս. Մ. Անանօվի Մօսկվայի գիլզաները։

Գործարանը—ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, բաժանմունքը—ՌՕՍՏՕՎՈՒՄ ԴՕՆԻ ՎՐԱ.

1—8

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

Ծախվում են հայերէն հետեւեալ գրքերը՝

Մելեան Մես. քահ., «Քահանայական խնդրի»-ի շուրջը, Թիֆլիս, 1901 թ., գ. 50 կ.
Թարխանեան Ալ., Թատրօն, պատկերազարդ գրական եւ թատերական հանդէս, չորրորդ տարի, գիրք Է. № 1, Թիֆլ. 1900 թ., Թատրօնի իւրաքանչիւր գիրքը արժէ 2 ր.
Արծրունի Վ. բժշկ., Ամուսնութիւն, առողջապահական էտիւդ, Թիֆլ. 1901 թ. գ. 75 կ.
Մովսիսեան Ե., Եաշի-Ֆիդան (Շիրակի հէքիաթներից մէկը), Ալ. 1901 թ. գ. 10 կ.
Շելգունովա Լ.—Արջի պատմութիւնը, Զասօդիմսկի—Դայլը, նկարներով, Թիֆլիս, 1901 թ, գ. 15 կ.
Ալիշան, հ. Ղեւոնդ, Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստ. եւ Ռումենիոյ, Վենետ. գ. 1 ր. 50 կ.
» » » Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ Վենետաց, Վենետ, գ. 1 ր. 50 կ.
Զարբանալեան հ. Գար., Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յաբեւմուտս, Վենետ., գ. 1 ր. 50 կ.
Շանթ, 1) Դերասանուհին—40 կ., 2) Երազ օրեր—40 կ., 3) Դարձ—40 կ. եւ 4) Վերժին—60 կ.
Շիլլէր, Դօն-Կարլօս, դրամատ. բանաստ. 5 գործող., Թիֆլ., գ. 1 ր.
Պարոնեան Յակ., երգիծաբան, 1) Քաղաքավարութեան վնասները—75 կ., 2) Արեւելեան ատամնաբոյժ, կատակերգ. 5 արար.—50 կ. եւ 3) Ծիծաղ—1 ր. 25 կ.
Սարգսեան Հ. Բարս., Ագաթանգեղոս եւ իր բազմադարեան գաղտնիքն, քննադատութիւն, Վենետ., գ. 2 ր.
Քաջունի Հ. Ման., 1) Մեղուաբուծութիւն—65 կ., 2) Պարտիզպանութիւն, Վենետ.—60 կ.
Ֆենելօն, Տելեմաք, պատկերազարդ, Վենետ. 2 ր. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Կ. Ե. Հ.) 3—3

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են Ա. Պօղօսեանի գումարով հրատարակված հետեւեալ գրքերը

«Անդարդ Հանէսը»	պատկերազարդ, թարգ.	Լ. Մէլիք-Ադամեանի	40 կ.
«Կարէնն ու Մանէնը»	» »	» » »	40 »
«Եօթն ագռաւ»	» »	» » »	40 »
«Պատիկ ու Զատիկ»	» »	» » »	40 »
«Խղճով դատաստան»	»	Ստ. Մալխասեանի	05 »
«Մաքսիմկա»	»	Ա. Մխիթարեանի	15 »
«Արդար ծերունի»	»	» »	15 »
«Իւլիանկա»	»	Գ. Հովսեփեանի	10 »
«Եասի արկածքները»	»	Պ. Պռօշեանցի	10 »
«Ի՞նչ է ասում սենեակը»	»	Զ. Տէր-Գրիգորեանի	10 »
«Պառաւ ծիտը»	»	տ. Եղ. Սարգսեանի	03 »

Գումարով գնողներին զիջումով։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ" (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну. 2—2

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.

եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի 20 յունիսի (3 յուլիսի) շոգենաւ՝ ՄԻՆԳՐԷԼԻ, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրաչէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նարբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Միօնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՎԻ—եղբ. Վ. եւ Ի. Մուշթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՕՎՈՐՕՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Չ.) 12—20

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Iюня 1901 г.

Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.